Արմինե Զորանյան
ՀՀ փաստաբանների պալատի անդամ,
ԵՄՀ իրավագիտության ամբիոնի դասախոս

ՄԵԴԻԱՏՈՐԻ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԻՐԱՎԱՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Սույն հոդվածի նպատակն է ուսումնասիրել մեդիատորի (հաշտարարի) իրավական կարգավիճակին և նրա անձնային հատկանիշներին վերաբերող մի շարք հարցեր: Առանձնացվում են Հայաստանի Հանրապետությունում մեդիացիային (հաշտարարությանը) խոչընդոտող բազմաթիվ գործոններ (կոնֆլիկտայնության մակարդակ, մտածելակերպի առանձնահատկություններ, անձնային հատկանիշներ և այլն): Առաջարկ է արվում կատարելագործելու մեդիատորների ուսուցման դասընթացի կազմակերպումը:

Հիմնաբառեր. Իրավական կարգավիճակ, օրենսդրական նորմեր, միջազգային փորձ, արհեստավարժություն, տեսական և գործնական իմացություն:

Ներածություն

Քաղաքացիաիրավական վեճերի քննության այլընտրանքային եղանակների կիրառումը կարևորվում է Հայաստանի Հանրապետությունում: 2018 թվականին ընդունվեց «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքը, որը ստեղծում է իրավական հիմքեր տարաբնույթ վեճերը հաշտարարության միջոցով լուծելու համար: Նույն օրենքի՝ «Հաշտարարի արտոնագրումը, արտոնագրված հաշտարարների ռեեստրը, արտոնագրված հաշտարարների վերապատրաստումը: Մշտապես գործող հաշտարարական հաստատությունը» վերտառությամբ 4-րդ գլուխը նվիրված է մեդիատորի որակավորման պահանջներին: Սակայն օրենքում ներկայացրած որոշ պահանջներ չեն համապատասխանում միջազգային փորձին ու տվյալ ինստիտուտին ներկայացվող առանձնահատկություններին:

Հեղինակի կողմից առանձին-առանձին վերլուծվել են մեդիատորի որակավորման չափանիշներին ուղղված (գործնականում՝ խնդիրներ առաջացնող) այնպիսի հիմնահարցեր, որոնք վերաբերում են վեճերի քննության կարգի ճիշտ անցկացմանը, կազմակերպմանը, այսինքն՝ մեդիացիոն գործընթացի արդյունավետությունն ապահովելուն ուղղված հարցերի շրջանակներին:

Բացի այդ, միջազգային փորձի հիման վրա, ներկայացվել են որակավորման դասընթացների տևողության (վերապատրաստման ժամաքանակի) հետ կապված տեսական և գործնական առաջարկներ:

Ուսումնասիրության տեսական հիմքը

Յուրաքանչյուր ոլորտում ընդհանրապես պահանջվում են հետազոտական աշխատանքներ, որոնց արդյունքները կարող են տվյալ բնագավառում աջակցել նոր համակարգի ստեղծմանը կամ ապահովել վերափոխվող, բարեփոխվող համակարգը:

Գաղտնիք չէ, որ վեճերի լուծման միջնորդական կարգը գոյություն է ունեցել պատմական վաղ ժամանակահատվածներում, որն արտացոլվել է տարբեր կանոնագրքերում, ժողովածուներում և իհարկե՝ Աստվածաշնչում:

Հայաստանի Հանրապետությունում ներկայումս ընթանում են դատաիրավական բարեփոխումներ, որոնք շարունակական բնույթ են կրում: Այդ է վկայում 2018-2023 թվականների համար ՀՀ արդարադատության նախարարության հերթական ռազմավարական նախագիծը դատական և իրավական բարեփոխումների մասին, որը փաստում է հիմնախնդրի (մասնավորապես՝ մեդիացիայի) կիրառման արդիականության մասին (ՀՀ արդարադատության նախարարության նախագիծը՝ Դատական և իրավական բարեփոխումների մասին, 2018-2023թթ.):

Նկատի ունենալով, որ Հայաստանի Հանրապետությունում մեդիացիան դեռևս գտնվում է զարգացման սկզբնական փուլում, անհրաժեշտ ենք համարում ուշադրություն դարձնել մեդիատորի որակական հատկանիշներին: Չէ՞ որ ինստիտուտի զարգացման համար առանձնահատուկ դեր ունեն հենց իրենք՝ մեդիատորները:

Աշխատանքում որպես հիմնաղբյուր են օգտագործվել առանձին գիտնականների աշխատանքները: Ընդ որում, հայրենական աղբյուրների հետ զուգահեռ աշխատանքում օգտագործվել են հետազոտման առարկային առնչվող արտասահմանյան հեղինակների աշխատություններ և տարբեր երկրների (ԱՄՆ, Գերմանիա, Ֆրանսիա, Անգլիա, Շվեդիա, Բելգիա, Ռուսաստանի Դաշնություն) օրենսդրական ակտեր ու գործնական հմտություններ:

Մեդիատորի արհեստավարժությունը

Մեդիատորի (հաշտարարի) ինստիտուտը գոյություն է ունեցել Հին Հունաստանում, և *մեդիատոր* եզրույթը ձևավորվել է մի շարք անվանում-

ներ ունենալուց հետո[1]:

2018 թվականի հունիսի 13-ի թիվ ՀՕ-351-Ն «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքի 4-րդ գլուխը իրավական հիմքեր է ստեղծում հաշտարարական գործունեություն իրականացնելու ինչպես արտադատական կարգով, այնպես էլ դատական գործընթացի ցանկացած փուլում: Սակայն մեր կարծիքով՝ ոչ պակաս կարևոր է նաև ուշադրություն դարձնել մեդիատորի արդյունավետ գործընթացն ապահովելու հետ կապված և ստորև նշված հանգամանքներին:

Մեդիատորի մասնագիտությունն ընդհանրապես կրում է խիստ բարոյական բնույթ, այդ թվում՝ բարոյական պատասխանատվություն և պարտավորություն: ԱՄՆ-ում, եվրոպական մի շարք երկրներում (Ֆրանսիա, Գերմանիա, Բելգիա, Ավստրիա, Իտալիա, Ռումինիա), ԱՊՀ երկրներում (ՌԴ, Բելառուս, Մոլդովա և այլն) գործում են մեդիատորի արհեստավարժության (պրոֆեսիոնալիզմի) հետ կապված առանձին վարքագծի կանոններ, որոնք կարևորվում են միջազգային պրակտիկայում (Шамликашвали Ц. А. 2013թ. էջ 5-9):

Մեդիատորի պրոֆեսիոնալ որակավորումը էական նշանակություն ունի գործի քննության համար: Այդ կապակցությամբ առանձնացնենք երկու կարևոր դրույթներ, այն է՝

- մեդիացիայի շրջանակներում գիտելիքների տեսական և գործնական իմացությունը,
- կրթության մասին համապատասխան վկայականը:

Թեև մեդիացիան շատ հաճախ դիտարկվում է որպես առանձին մասնագիտություն, ինչը պահանջում է տվյալ ոլորտի մասնագիտացած (հմտացած) և ոլորտին տիրապետող կադրերի առկայություն, սակայն հաճախ պահանջվում է, որ մեդիատորները ունենան ոչ միայն վկայական, այլև շարունակաբար անցնեն հատուկ վերապատրաստման դասընթացներ:

Գաղտնիք չէ, որ յուրաքանչյուր մասնագիտություն պահանջում է արհեստավարժություն, փորձ կամ հեղինակություն, որոնք բարձր են գնահատվում և վստահություն են ներշնչում կողմերին, և դա կարևոր դեր է խաղում մեդիատորներին դիմելու հարցում: Չնայած դրան՝ մեդիացիա իրականացնելու պարագայում դրանք դեռևս որոշիչ դեր չեն խաղում: Պրակտիկայում, օրինակ, կարող ենք հանդիպել այնպիսի իրավիճակների, երբ վեճի լուծման համար կողմը որպես մեդիատոր կարող է պահանջել հոգեբանի կամ վեճի առարկային բանիմաց փորձագետի, առավել ևս, երբ այդ իմացությունը խիստ մասնագիտական է և էապես կարևոր է վեճի հանգուցալուծման համար: Օրինակ՝ դատավորը, արբիտրը, փաստաբանը կամ տնտեսագետը մասնագիտացած են իրենց ոլորտում, բայց նրանք չեն կարող նաև մեդիատորի դեր ստանձնել, որպեսզի կասկածի տակ չդրվի այս ինստիտուտը, և որպեսզի մեդիացիոն գործընթացն ավարտվի կողմերի գոհունակությամբ[2]:

1 Լատիներեն mediator եզրույթն օգտագործելուց առաջ այն ունեցել է հետևյալ անվանումները. «internuncios, medium, interlocutor, philantropus, interpolator, conciliator, interlocutor, interpres»:

2 Իհարկե, մեդիատորները կարող են ունենալ տարբեր մասնագիտական որակավորումներ և

Մեդիացիայի արդյունավետ կիրառման ընթացակարգերը. մեդիացիան մեր երկրում, կարելի է ասել, վերջին տարիներին ստեղծված, մարդկանց միջև կոնֆլիկտների և վեճերի լուծման արտադատական ինստիտուտ է, որը նախատեսում է կողմերի միջև գոյություն ունեցող տարաձայնությունների լուծում քաղաքակիրթ երկխոսության միջոցով: Մեդիացիայի ներդրումը թույլ է տալիս փոխել խնդրահարույց իրավիճակներում մարդկանց վարքագիծը, կանխել և նվազեցնել հասարակության մեջ կոնֆլիկտայնության մակարդակը, ներդաշնակեցնել սոցիալական հարաբերությունները:

Ներկայումս մեր երկրում, ի տարբերություն՝ մի շարք եվրոպական երկրների, մեդիացիայի ներդրման պրոցեսը այնքան էլ ինտենսիվ չէ[1]:

Մեդիացիայի մասին որոշ դրույթներ ամրագրվել են ՀՀ 2018թ. քաղաքացիական դատավարության օրենսգրքում (Զոբանյան Ա., 2018 էջեր 26–31): Մեդիատորի կարգավիճակ ձեռք բերելուն ուղղված որոշ դրույթներ արտացոլվել էին նաև նախկին քաղաքացիական դատավարության օրենսգրքի 22.3–րդ գլխում, որտեղ 2015թ. փոփոխությունների արդյունքում նախատեսվում էր նաև հաշտարարների արտոնագրման ինստիտուտ:

Մի շարք երկրներում մեդիացիան ակտիվորեն ներդրվել և գործում է բավական ձկուն ձևերով: Այդ երկրներում գործում են մեդիատիվ օգնություն ցուցաբերելու բազմաթիվ կենտրոններ, հաճախակի անց են կացվում մեդիացիային նվիրված գիտաժողովներ, կլոր սեղաններ, ինչի անհրաժեշտությունն առկա է նաև մեր երկրում:

Մեդիացիոն ինստիտուտներ ունեցող երկրներում գործում են զգալի թվով մեդիատորներ: Մինչդեռ ՀՀ–ում 2015 թվականից առ այսօր արտոնագրվել են ընդամենը 56 հաշտարարներ, ովքեր գրեթե մեդիատիվ գործունեություն չեն իրականացնում: Մեր կարծիքով կարելի է և նույնիսկ անհրաժեշտ է երկու տարին մեկ ՀՀ–ում կազմակերպել մեդիատորների արտոնագրման գործընթաց, քանի որ այստեղ առկա է որակյալ մասնագետների պակաս[2]:

ԱՄՆ–ում, եվրոպական երկրներում, ՌԴ–ում, «մեդիացիա» դասընթաց ծրագրով շատ շրջանային դատարաններում ստեղծվել են առանձին սեն-

համապատասխան որակավորում (կրթություն): Բայց մեկ մեդիատորը չի կարող հանդես գալ մի քանի մասնագիտություններով մեկ գործընթացի շրջանակում:

1 Հայաստանի Հանրապետությունում մեդիացիայի հանդեպ հետաքրքրությունն առավել կարևորվում է անչափահասների ոլորտում, որտեղ անհրաժեշտ է կիրառել վերականգնողական մեդիացիա ոչ միայն ազատազրկման դատապարտված անչափահասների հետ, այլ մեդիացիան կիրառել նաև որպես կանխարգելող մեթոդ՝ անչափահասների շրջանում: Այսպիսով, հնարավոր կլինի իրազեկել հանրությանը՝ ընդհանրապես մեդիացիայի էության, առանձնահատկությունների և տեսակների մասին:

2 Մեդիացիայի ինստիտուտն ըստ էության նոր է Հայաստանի Հանրապետությունում և դրան պետք է լրջախոհ ու պատասխանատու մոտեցում ցուցաբերել թե՛ արտոնագրման գործընթաց իրականացնելու ժամանակ և թե՛ մինչև արտոնագրման գործընթացը կազմակերպելը: Այսինքն՝ անհրաժեշտ է կարևորել, թե ովքե՞ր կարող են արտոնագրվել (մրցակցային փուլ պետք է նախատեսել) և առավել ևս արտոնագրված մեդիատորները բավական զգոն, պրոֆեսիոնալ և համբերատար պետք է լինեն յուրաքանչյուրն իրենց գործողություններում: Արտոնագրված հաշտարարներից շատ քչերն են իրականացնում մեդիատիվ գործունեություն, ինչի անհրաժեշտությունը խիստ առկա է: Փաստացի տվյալներով գործունեությունն իրականացվում է միայն Եվրախորհրդի Պիլոտային ծրագրի շրջանակներում: Օրինակ՝ ԱՄՆ–ում և մի շարք զարգացած իրավական համակարգ ունեցող երկրներում հաշտարարությամբ զբաղվում են նաև պաշտոնաթող դատավորները (թոշակի տարիքը լրացրած դատավորները), ինչը, կարծում եմ, կարելի է իրականացնել նաև ՀՀ–ում:

յակներ, որտեղ հաշտարարները արտադատական կարգով իրականացնում են մեդիատիվ գործունեություն և կողմերի փոխհամաձայնության դեպքում նրանց օգնությամբ կնքվում են մեդիացիոն հաշտության համաձայնագրեր (Правоторов А., 2014, էջ 1): Մինչդեռ Հայաստանի Հանրապետությունում դեռևս չի արձանագրվում նման հաջող պրակտիկա, ինչի անհրաժեշտությունն ակնհայտորեն առկա է: Սակայն, ինչպես նշում են մի շարք գիտնականներ, մեդիացիայի կայացման ճանապարհին գլխավոր խոչընդոտը հասարակության մեջ կոնֆլիկտայնության բարձր մակարդակն է (Яковлев О., 2012, էջեր 14–30): Մեր կարծիքով կան նաև մեդիացիայի կիրառման այլ խոչընդոտներ, որոնք ունեն ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ հիմքեր: Այսպես՝

- առաջին խնդիրը, ըստ մեր դիտարկման, կապված է մեր հասարակության մտածելակերպի առանձնահատկությունների և վեճերի լուծման ձևավորված ավանդույթների հետ,
- հաջորդ խնդիրը կապված է մեդիատորի անձնային բնութագրերի առանձնահատկությունների հետ՝ մասնագիտական գործունեության պահանջներին դրանց համապատասխանության առումով:

Ներկայացված խնդիրներից յուրաքանչյուրը վերլուծենք առանձին-առանձին:

Մարդու մտածելակերպում արտացոլվում և դրսևորվում են աշխարհի մասին նրա պատկերացումները, որոնք ձևավորված են արժեքային, բարոյական և մշակութային բաղադրիչների հիման վրա: Անձի այդպիսի պատկերացումները կրում են ինչպես գիտակցվող, այնպես էլ չգիտակցվող բնույթ: Ա.Ա. Բրիժինսկու, Օ. Կետովայի և Գ. Պոխմելկինայի կարծիքով՝ յուրաքանչյուր երկրի մտածելակերպի որոշ բնութագրեր նշանակալի են տվյալ հասարակության մեջ սոցիալական պրակտիկայի ներդրման հաջողության տեսանկյունից (Брыжинский А.А., 2005, էջեր 10–20): Գիտնականների մեկ այլ խումբ նշում է, որ փոխզիջման մասին հասարակության ներսում առկա պատկերացումները դիտարկվում են որպես թուլության դրսևորում: Վերջիններս այնուհետև անդրադառնում են կոնֆլիկտների արտաքին հրամայականի կարգավորմանը, գտնելով, որ բարդ կենսական իրավիճակներում առկա է լուծում որոնելու համար պատասխանատվություն ստանձնելու ցանկության բացակայություն և որոշումների ընդունման ինքնուրույնություն (Мета Герда, Похмелкина Г., 2004, էջեր 20–30: Izor Sean, 2013, N1, էջեր 1–2):

Ներկայումս Հայաստանի Հանրապետությունում հասարակությունը դեռևս վատ է տեղեկացված մեդիացիայի էության մասին: Ինչի կապակցությամբ դատավարության կողմերը (հայցվորները և պատասխանողները) առավել հաճախ հրաժարվում են իրենց համար դեռևս անհասկանալի այդ ընթացակարգից:

Որոշակի բարդություն է ներկայացնում կոնֆլիկտի՝ պոտենցիալ մեդիացիայի ենթակա լինելու որոշումը: Օրինակ՝ որոշ կոնֆլիկտներ, որոնք արտաքուստ թվում են մեդիացիային ենթակա, իրականում այդպիսին չեն:

Նախևառաջ դա վերաբերում է այն դեպքերին, երբ կոնֆլիկտող կողմերը չեն ցանկանում պահպանել հարաբերությունները, երբ կոնֆլիկտը կրում է ձգձգվող բնույթ, երբ կոնֆլիկտը, այսպես ասած, ավելի լայն է, քան դատական վեճը:

Դրա հետ մեկտեղ, Հայաստանի Հանրապետությունում ևս կա մեդիացիայի զարգացմանը նպաստող ծանրակշիռ գործոնների առկայություն: Գ.Վ. Պոխմելկինան և Ի.Ն. Սեմյոնովը այդ կապակցությամբ նշում են, որ դատարանների կոռումպացվածությունը, **նաև գերծանրաբեռնվածությունը (ընդգծումը մերն է՝ Ա.Զ.)** կնպաստեն քաղաքացիներին՝ դիմելու արտադատական մարմինների, արտադատական պրակտիկայի: Ըստ այս հեղինակների՝ հասարակության շրջանում առկա է մեդիացիայի նկատմամբ հետաքրքրություն, ուստի կա նաև պրակտիկայում մեդիացիայի ներդրման անհրաժեշտության ըմբռնում (Похмелкина Г.В. и Семенов И.Н., 2008, էջեր 121–138):

Փաստենք, որ ժամանակակից մեդիացիայի եղանակներով կոնֆլիկտների լուծման պատմական ավանդույթները վերստին կրկնում են Խորհրդային Միության ժամանակաշրջանում գոյություն ունեցող դատարանների տարատեսակներին[1], **և նկատենք, որ յուրաքանչյուր դեպքում (անկախ վեճի բնույթից), յուրաքանչյուր ժամանակահատվածում խաղաղության, հանգստության, բարիդրացիական հարաբերություններում ապրելու պահանջմունքը մարդկանց համար հիմնարար է:**

Անդրադառնալով մեդիատորների պատրաստման, վերապատրաստման և որակավորման բարձրացման խնդրին՝ նշենք հետևյալը. նախ և առաջ բավարար չէ ժամանակաքանակը, որը հատկացված է ներկայումս գործող արտոնագրված հաշտարարի հենքային պատրաստման համար: Բացի դրանից՝ կրթությունը, որը ներկայումս ցանկացողներին առաջարկում է ստանալ մեդիատորի որակավորում, չի երաշխավորում նրա մասնագիտական պատրաստվածության որակը: Ասվածը հիմնավորվում է հետևյալով. սովորողներին առավելապես տրվում են մեդիացիայի էության, նրա սկզբունքների և հիմունքների մասին տեսական գիտելիքներ: Նրանք չեն ստանում պրակտիկորեն կողմնորոշված, այսպես կոչված, «կենդանի գիտելիքներ» և, որպես հետևանք, ապագա մեդիատորները ստանում են ոչ խորը, այսինքն՝ մակերեսային կրթություն [2]:

Վերը նշվածը, նախևառաջ, կարող ենք բացատրել այն մանկավարժների պակասով, ովքեր տիրապետում են մեդիացիոն ընթացակարգերի մեթոդաբանությանը, տեխնիկային, գործնական հմտություններին և համա-

1 Խորհրդային Միությունում գործում էին սպայական, առևտրական, գյուղացիական և այլ դատարաններ, որոնք, ըստ էության, նման են եղել մեդիացիային:

2 ՀՀ Կառավարության 2015 թվականի հուլիսի 2-ի N 720-Ն որոշմամբ ՀՀ-ում հաշտարարների որակավորման դասընթաց կազմակերպելու, անցկացնելու, հաշտարարներին որակավորման վկայագիր տրամադրելու կարգ և ժամկետ էր սահմանվել: Դասընթացները սկսվել էին 2015 թվականի օգոստոսի 11-ից երեքշաբթայ (տասնհինգ օր, 120 ժամ) տևողությամբ: Այնուհետև 2015 թվականի օգոստոսի 25-ին մեկնարկեցին հաշտարարների որակավորման քննությունների թեստավորման, իսկ օգոստոսի 27-ին՝ հարցազրույցի փուլերը, որից հետո տեղի ունեցավ հաշտարարության որակավորման հանձնաժողովի նիստը: Ամփոփվեցին հաշտարարների որակավորման քննության հարցազրույցի փուլի արդյունքները, որի հիման վրա էլ այսօր թվով 56 հաշտարար ունի որակավորման վկայագիր:

պատասխան դասընթացն անցկացնելու փորձին:

Արտասահմանյան մի շարք գիտնականներ ընդգծում են, որ մեդիացիայի ուսուցումը նպատակահարմար է կատարել ինտերակտիվ ձևով՝ վարժանքային պարապմունքների միջոցով:

Մեդիատորի պատրաստվածությունը

Մեդիացիայի կառուցվածքը (սոցիալական տեխնոլոգիան) պահանջում է ինչպես այդ ընթացակարգի տեսական և մեթոդաբանական հիմքերի, նրա փիլիսոփայության, խաղաղարարության, տրամաբանության իմաստավորված տիրապետում, այնպես էլ կոնկրետ գործողությունների՝ տեխնոլոգիաների ուսուցում, պրոֆեսիոնալ միջնորդական իրավասությունների ձևավորում: Այդպիսի մոտեցումը ենթադրում է պրոֆեսիոնալ մեդիատորի պատրաստման ընթացքում ինտենսիվ վարժանքների անցկացման անհրաժեշտություն՝ կոնֆլիկտային իրավիճակում ճիշտ կողմնորոշվելու և վիճող կողմերին առաջնորդելու համար:

Ի վերջո, մեդիատորի պատրաստվածությունը ենթադրում է աշխատանք հենց իր՝ մեդիատորի անձի հետ: Նման կարծիքների հանդիպում ենք տարբեր գիտնականների աշխատություններում: Օրինակ՝ Խ. Բեսեմերի, Օ.Վ. Ալլախվերդովայի աշխատություններում արտահայտված է այն միտքը, որ հենց մեդիատորի անձն է արդյունավետ միջնորդության հիմնական գործիքը (Бесемер Х., 2004, էջ 176, Аллахвердова О.В., 2008, էջեր 110–117):

Այսպիսով՝ կարող ենք արձանագրել, որ պրոֆեսիոնալ մեդիատորը մարդ է, որը որդեգրել է ոչ բռնության, խաղաղարարության գաղափարը և մշտապես ղեկավարվում է մեդիացիայի գերխնդրի, նրա նպատակների և մասնավորապես՝ այնպիսի նպատակների գաղափարներով, որոնք հիմնված են իրական միջնորդական գործողությունների վրա՝ նպաստելով հասարակության միասնականությանը:

Կարևոր են նաև մեդիատորի գիտելիքները, նրա պատրաստվածությունը՝ մարդկանց հետ հաղորդակցվելու առումով: Այսպես՝ մեդիատորը, լինելով մասնագետ հաղորդակցության և բանակցությունների բնագավառում, ինչպիսիք են հոգեբանությունը, սոցիոլոգիան, կոնֆլիկտաբանությունը, մանկավարժությունը, հոգելեզվաբանությունը, չի կարող առանց հիմնարար գիտելիքների արդյունավետ իրականացնել իր առջև դրված մեդիացիոն գործընթացը: Օրինակ՝ յուրաքանչյուր միջանձնային և գործնական կոնֆլիկտում կարելի է գտնել հոգեբանական արմատներ: Ինչ է դա նշանակում: Նշանակում է հայտնաբերել հոգեբանական ճնշված պահանջմունքները, ցանկությունները և շարժառիթները: Մեդիատորը պետք է կարողանա հոգեբանորեն գրագետ աջակցել կողմերին, տեղաշարժել խնդիրը մեռած կետից, այսինքն՝ կողմերին օգնել դուրս գալու փակուղուց: Կարևոր է կոնֆլիկտի մասնակիցների միջև կառուցել հարաբերությունների նոր կոնֆիգուրացիա, կարողանալ տեսնել վիճելի իրավիճակի լուծման բազմաթիվ տարբերակներ:

Մեր կարծիքով՝ հոգեբանության բնագավառի գիտելիքների իմացութ-

յունը խիստ կարևոր է իրավագիտության որակավորում ստացած մեդիատորի համար: Էական նշանակություն ունի մեդիացիոն գործունեության ոչ միայն հոգելեզվական հնարքներին տիրապետելը, այլև շփման և վիճող կողմերի վրա հոգեբանական (հոգելեզվաբանական) ներգործության խոսքային եղանակներին մասնագիտորեն տիրապետելը:

Մեդիացիայի ընթացակարգը ենթադրում է մեդիատորի կողմից դրական հոգեբանական մթնոլորտի ստեղծում միջնորդական ընթացակարգում, զրույցի անցկացման շրջանակների գրագետ ձևակերպում, մասնակիցների վարքագծում հնարավոր սահմանների կարգավորում (ապահովում): Անհրաժեշտ է վիճող կողմի (կողմերի) վրա խոսքային հոգեբանական ազդեցության օրինաչափությունների, նրա վրա արդյունավետ խոսքային ներգործության իմացություն, խոսքի միջոցով մեդիացիայի նպատակների տեսակետից նշանակալի պահերը ամրագրելու ունակություն:

Մեդիատորի անձի հետ կապված՝ կարող ենք փաստել, որ այստեղ նույնպես կան խնդիրներ: Իբրև հաշտարար արտոնագրվածներից ոչ բոլորն ունեն մասնագիտության համար անհրաժեշտ հոգեբանական հմտություններ: Խնդիրը առավել տեսանելի դարձնելու համար շատ կարևոր է մինչև արտոնագրման գործընթացը հաստատելն ապագա հաշտարարին մեդիատիվ պրակտիկ խնդիրներ առաջարկելը, ինչպես նաև հաշտարարի պատրաստման, վերապատրաստման դասընթացը վարժանքների տեսքով իրականացնելը:

Ավելին՝ Հայաստանի Հանրապետությունում երեքշաբաթյա ժամկետը, մեր կարծիքով, բավարար չէ մեդիատորի որակավորման համար:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ մի շարք գործող մեդիատորներ անվստահ վարքագիծ են դրսևորում միջնորդական ընթացակարգերում: Եվ հակառակը՝ գոյություն ունեն այնպիսի մեդիատոր-անձնավորություններ, ովքեր վստահ են իրենց ուժերին և կարծում են, որ «իրենց ամեն ինչ կհաջողվի»: Վերոնշյալ դրույթները էապես կարևոր են մեդիացիոն գործընթացներ իրականացնելիս, և գործնականում մեդիատորի գործունեության արդյունավետությունը ապահովելու համար անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև մեդիատորի անձի անհատական-հոգեբանական հետևյալ առանձնահատկություններին. ցածր կրեատիվություն[1], ցածր սթրեսակայունություն (խուճապ)[2], չափից դուրս հուզական ներգրավվածություն մեդիացիոն գործընթացում (մեդիատորը պետք է լինի անկողմնակալ)[3], տրամաբանական և կանխատեսական գործառույթ-

1 Այս դեպքում կարևոր է, որպեսզի մեդիատորը հետևի իր յուրաքանչյուր խոսքին, քանի որ նա կարող է տալ կրկնվող հարցեր, կամ այնպիսի հարցեր, որոնք չեն վերաբերում գործի էությանը, կամ այնպիսի հարցեր, որոնք խորացնում են կողմերի միջև առկա պառակտվածությունը:

2 Ցածր սթրեսակայունությունը դիտվում է որպես մեդիատորի «խուճապ»: Այդպիսի իրավիճակ առաջանում է, երբ կողմերը դրսևորում են անզիջողականություն, իսկ մեդիատորի ունեցած գիտելիքների և պրակտիկ հմտությունների ռեսուրսը սպառվում է: Ահա այս դեպքում մեդիատորը կարող է դրսևորել միջնորդին վերապահված սկզբունքին անհամապատասխան վարքագիծ և կարող է հրաժարվել խնդրի լուծման հետագա որոնումներից: Այսինքն՝ մեդիատորի շփոթմունքը կողմերի մեջ առաջացնում է հիասթափվածություն, ովքեր կարող են արտահայտել իրենց անվստահությունը մեդիացոն ընթացակարգի անհեռանկար լինելու մասին:

3 Այս դեպքում մեդիատորը չի կարողանում թաքցնել իր նախընտրությունները, հուզականորեն կարող

ների ոչ զարգացվածություն[1] և այլն, որոնք չեն հանգեցնի և կարող են խոչընդոտել իրենց առջև դրված խնդրի ճիշտ հանգուցալուծմանը:

Հասկանալի է, որ մեդիացիայի ընթացակարգի կազմակերպման և անցկացման կարգի համար պատասխանատու են իրենք՝ մեդիատորները: Այս կապակցությամբ շատերին կարող է մտահոգել այն հարցը, թե ի՞նչ հատկություններով պետք է օժտված լինեն այդ կարգավիճակին հավակնող անձինք: Ներկայումս մեդիատորի կարգավիճակի օրենսդրական սահմանումը բավական անորոշ է: Իհարկե օրենքում, կարգավորված է այն հարցը, թե քանի՞ տարեկան կարող է լինել մեդիատորի որակավորմանը հավակնող անձը («Հաշտարարության մասին» ՀՀ օրենք, 2018, հոդված 3, գլուխ 4), սակայն անհրաժեշտ է նաև այդ ոլորտի գործնական փորձառությունը, ասել է թե՝ մարդկանց հետ շփվելու արվեստը:

Մեդիատորի առանձնահատուկ հատկանիշները և ՌԴ վիճակագրական տվյալները մեդիացիոն գործընթաց իրականացնելու ոլորտում. արտասահմանյան երկրների՝ այդ թվում՝ Ռուսաստանի Դաշնության մեդիացիայի վերաբերյալ օրենքներում նույնպես ամրագրված է, որ քսան-հինգ տարին լրացած, լրիվ գործունակ և դատվածություն չունեցող անձինք, ովքեր ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն և անցել են ուսուցման դասընթաց մեդիատորների պատրաստման ծրագրով, կարող են պրոֆեսիոնալ հիմունքներով իրականացնել մեդիացիայի ընթացակարգը:

Ե.Ա. Բորիսովայի կարծիքով, մեդիատորի առավել կարևոր հատկանիշները և հմտություններն են պարկեշտությունը, եռանդունությունը, կրեատիվությունը, դիտողականությունը, ընդհանրացումներ անելու և իրավիճակը վերլուծելու կարողությունը (Борисова Е.А. 2011, էջեր 10–13): Նմանատիպ կարծիք է արտահայտել նաև Վ.Վ. Կոլոմիտցևան, ըստ որի՝ մեդիատորին հարիր է սոցիալ-հոգեբանական այն հիմնական ֆակտորները, որոնք են խաղաղ դիրքորոշում ունենալը և այն պահպանելը, նրա սոցիալ-հոգեբանական կարգավիճակը, մշակույթը, կուլտուրան և այլն (Коломытцева В.В., 2016, էջ 27):

Առավել կարևոր է առանձին հմտություններ և գիտելիքներ ներդաշնակորեն համադրելու ունակությունը, այն է՝ խնամքով և պատասխանատու կերպով մեդիացիայի ընթացակարգը իրականացնելը, որում կողմերը կարող են ազատ լինել և գիտակցաբար ընդունել վեճի վերաբերյալ փոխշահավետ լուծումներ:

Օտարերկրյա փորձագետները մեդիատորի համար առավել կարևոր հատկանիշներ համարում են նախաձեռնողականությունը, ձեռներեցությու-

---

է միանալ կողմերից մեկին, որը կարող է լինել ավելի մեծ զոհի դերում: Երբեմն կարելի է նկատել մեդիատորի հուզականորեն ներգրավվածությունը, երբ նա կարող է հանդես գալ դաստիարակի դերում (ինչը հաճախ օգտագործում են տարիքով կանայք): Սրանք մեդիացիոն գործընթաց իրականացնելիս թույլատրելի չեն և կողմերին պետք է դիտարկել հավասար, ինչը մեդիացիայի որդեգրած սկզբունքներից մեկն է:

1 Մեդիատորը, անշուշտ, պետք է կանխատեսի գործի ելքը, սակայն իր տեսակետը չպետք է թելադրի կողմերին: Նա չպետք է խրվի մասնավոր հարթության մեջ և առավել ևս վեճը, խնդիրը չպետք է դարձնի առավել ծավալուն:

նը, դոմինանտությունը և լրացուցիչ տեղեկատվությունը մտապահելու ունակությունը:

Ըստ ՌԴ 2018 թվականի վիճակագրական տվյալների՝ կին մեդիատորները, ի տարբերություն տղամարդկանց, բարձր են գնահատել սեփական հույզերը հաղթահարելու, բարյացակամ մթնոլորտ ստեղծելու ունակությունը, կրեատիվությունը, զարգացած ինտուիցիան, կայունությունն արագ վերականգնելու ունակությունը և, որ ամենակարևորն է, խորաթափանցությունը:

Ի տարբերություն կանանց, տղամարդ մեդիատորները առավել կարևորում են տեղեկատվության մեծ ծավալ մտապահելու ունակությունը, լրացուցիչ տեղեկատվությունը մտապահելու ունակությունը, ձեռներեցությունը, նպատակասլացությունը առաջադրված խնդիրների լուծման հարցում, կազմակերպվածությունը, ազնվությունը, օբյեկտիվությունը և ինքնուրույնությունը:

Ասվածը նշանակում է, որ, կախված սեռից, գոյություն ունեն վիճակագրորեն նշանակալի տարբերություններ կանանց և տղամարդկանց կողմից մեդիատորի հատկանիշների գնահատման հարցում:

Կարելի է հետևություն անել, որ ՀՀ-ում «մեդիատոր» մասնագիտությունը ոչ միայն ամրագրվել է պրակտիկայում, այլև օրինական է դարձել իրավաբանական իմաստով: Սակայն մինչ օրս չկան որոշակի պահանջներ մեդիատորի՝ մասնագիտորեն կարևոր և անձնային հատկանիշների նկատմամբ, այդ պատճառով էլ մեր կարծիքով գոյություն ունի մեդիատոր մասնագետի՝ միջազգայնորեն սահմանված մասնագիտագրի ստեղծման անհրաժեշտություն, որը թույլ կտա առավել խորությամբ իմանալ (տիրապետել) տվյալ մասնագիտության բովանդակությունը, ինչպես նաև գնահատել դրա մասնագիտական պիտանիությունը:

Եզրակացություն

Հայաստանի Հանրապետության դատական համակարգի հիմնական առաքելությունը պետք է լինի զարգացնել գործերի արտադատական քննության կարգը և կիրառման մեթոդները, սոցիալ-տնտեսական, ընտանեկան, աշխատանքային, և այլ վեճերով: Բացի դրանից, արտադատական գործընթացներն իրականացնելու համար անհրաժեշտ է առաջին հերթին ուշադրություն դարձնել մեդիատորի (հաշտարարի) անձնային հատկանիշներին: Մեդիացիոն ինստիտուտի արդյունավետության հիմքում ընկած է որակավորված մեդիատոր-մասնագետը, որի ճիշտ գործընթացի արդյունքում է պատկերացում ձևավորվում տվյալ ինստիտուտի մասին:

Օբյեկտիվ անհրաժեշտություն է, որպեսզի մեդիատորն իր առաքելությունը, ինչո՞ւ չէ՝ նաև իր առջև դրված «պարտավորությունը» կատարի արհեստավարժ: Սա իր մեջ ներառում է տարբեր սկզբունքներ՝ սկսած բարոյական արժեքներից, ազնիվ կերպարից, այդ թվում՝ մեդիացիայի շրջանակներում գիտելիքների տեսական և գործնական իմացությունը: Միևնույն ժամանակ, մեդիատորները և մեդիացիոն ինստիտուտը պետք է հիմք ընդունեն ազգային մտածելակերպի ավանդույթները, ձևավորված իրավական հայե-

ցակարգերի և այս ոլորտի թե՛ իրավահասկացողության և թե՛ միջազգային փորձի՝ ժամանակակից մոտեցումներն, իրավաընկալումներն իրենց համակցությամբ:

Եվ վերջապես, նշենք՝ որ **երեքշաբաթյա ժամկետը, որը նախատեսված էր ՀՀ-ում 2015 թվականի ապագա հաշտարարների որակավորման դասընթացը կազմակերպելու համար, բավարար չէ: Անհրաժեշտ է առնվազն վեց ամիս սահմանել ուսուցման դասընթացը և տեսական գիտելիքներին զուգահեռ այն իրականացնել հիմնականում վարժանքների (ինտերակտիվ) տեսքով:**

Մեր կարծիքով՝ վերոնշյալ խնդիրների աստիճանական հաղթահարումը կնպաստի Հայաստանի Հանրապետությունում մեդիացիայի արդյունավետ իրականացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. ՀՀ արդարադատության նախարարության նախագիծը՝ Դատական և իրավական բարեփոխումների 2018-2023 թվականների ռազմավարությունը և դրանից բխող գործողությունների ծրագիրը հաստատելու մասին: https://www.e-draft.am/files/project_file/1/15125673334264.docx. (հղումը կատարվել է 06.04.2019թ.):
2. «Հաշտարարության մասին» ՀՀ օրենքը, հոդված 13, գլուխ 4, 2018 թվական:
3. Զոբանյան Ա. (2018): Պարտադիր (հարկադիր) մեդիացիայի կիրառման իրավական հետևանքները Հայաստանի Հանրապետությունում // «Օրինականություն» ՀՀ դատախազության գիտագործնական և ուսումնամեթոդական հանդես, Երևան, № 106, էջեր 26-31:
4. Аллахвердова О.В. (2008). Медиация как рационалйный способ урегулирования ценностных конфликтов //Известия Самарского научного центра Российской академии наук. Серия «Педагогика и психология», «Филология и искусствоведение», N1, էջեր 110-117:
5. Бесемер Х. (2004). Медиация. Посредничество в конфликтоах / Перевод с нем. Н.В. Маловой, Калуга, Духовное познание. էջ 176:
6. Борисова Е.А. (2011) Российская процедура медиации: концепция развития /Е. А. Борисова //Вестник гражданского процесса, N1, էջեր 10 -13:
7. Брыжинский А.А., Альтернативное разрешение правовых споров и конфликтов в России. Дисс., к.ю.н., Саранск, 2005, էջեր 10-20:
8. Коломытцева В.В. (2016). Медиация в социально-юридическом механизме разрешения правовых конфликтов. Автореферат, к.ю.н., Москва, էջ 27:
9. Мета Герда, Похмелкина Г. (2013). Медиация – исскуство разрешать конфликты. Знакомство с теорией, методами и профессиональными технологиями, М, 2004, էջեր 20-30: Izor Sean, Selling mediation in the East // Asian Journal on Mediation. N1, էջեր 1-2:
10. Похмелкина Г.В. и Семенов И.Н. (2008). Рефнетехнологии медиации в современной зарубежной практической психологии //Психолохия, Журнал Высшей школы экономики. Т. 5, N1, էջեր 121-138:

11. Правоторов А. (2014). Турнир в Чикаго: миссия выполнима //НСО Академии. N9, էջ 1:
12. Шамликашвали Ц. А. (2013). Медиация – междисциплинарная наука // Сборник материалов Обшероссийской научно-практической дистанционной конференции «Психология и педагогика»: Современные методики и инновации, опыт практического применения, Липецк: Кватра, էջ 5-9:
13. Яковлев В. Ф. (2012). Нам нужно обрести культуру диалога // Медиация и право. Посредничество и примирение. N24, էջեր 14-30:

Армине Чобанян
Член Палаты адвокатов РА
Преподаватель юридической кафедры Международного университета Евразия

ЮРИДИЧЕСКИЙ И ПСИХОЛОГИЧЕСКИЙ АНАЛИЗ СТАТУСА МЕДИАТОРА

В статье анализируется несколько вопросов, связанных с правовым статусом и персональными характеристиками медиатора.

Перечислены многие факторы, которые мешают посредничеству в Армении (уровень конфликта, особенности ментальности, атрибуты личности). Предлагается улучшить организацию учебных курсов для посредников.

Ключевые слова: Правовой статус, законодательные нормы, международный опыт, профессионализм, теоретические и практические знания.

Armine Chobanyan
Chamber of Advocates in RA
Lecturer of the Law Department at Eurazia International University

LEGAL AND PSYCHOLOGICAL ANALYSIS OF THE MEDIATOR STATUS

The article analyzes several issues related to the legal status and personal characteristics of the madiator.There are listed many factors, that impede mediation in Armenia (the level of conflict, features of mentality, personality attributes). It is proposed to improve the organization of training courses for intermediaries.

Keywords: legal status, legal norms, international experience, professionalism, theoretical and practical knowledge.

Հոդվածը ներկայացվել է գրախոսման՝ 2019թ. ապրիլի 1-ին
Հոդվածն ընդունվել է տպագրության՝ 2019թ. ապրիլի 19-ին